ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության տրանսպորտի վարչության պետի տեղակալ Արման Կարապետյանի
գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ԱՐՄԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության տրանսպորտի վարչության տեխնիկական քաղաքականության բաժնի պետ - վարչության պետի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Իրաքի Հանրապետություն, ք. Բաղդադ, 2019 թվականի մայիսի 14-16-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄ**

Իրաքի Հանրապետության տրանսպորտի նախարարություն

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ**

Մասնակցություն Հայաստանի Հանրապետության և Իրաքի Հանրապետության միջև տրանսպորտային փոխադրումների բնագավառում կայացած նիստին

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

Հանդիպման ընթացքում քննարկվել է Հայաստանի Հանրապետության և Իրաքի Հանրապետության միջև ավտոմոբիլային և օդային տրանսպորտի

բնագավառում երկկողմ համագործակցությունը զարգացնելու, ընդլայնելու և առկա խնդիրներն ու խոչընդոտները վերացնելու հետ կապված հարցեր:

Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև Իրաքի Հանրապետությունից Իրանի Իսլամական Հանրապետության տարածքով դեպի Հայաստանի Հանրապետություն և հակառակ ուղղությամբ տարանցիկ բեռնափոխադրումների կազմակերպման հնարավորությունները, ինչը թույլ կտա իրաքյան փոխադրողներին Հայաստանի Հանրապետության միջոցով մուտք գործել ԵԱՏՄ տարածք, ինչպես նաև հայկական փոխադրողներին՝ անարգել փոխադրումներ իրականացնել դեպի Արաբական թերակղզու երկրներ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին երկու երկրներում տրանսպորտային ծառայությունների մատուցման գործում չկարգավորված իրավահարաբերությունների, արհեստական խոչընդոտները վերացնելու, բեռնափոխադրումներն ու ուղևորափոխադրումները դյուրացնելու, ինչպես նաև տարածաշրջանային տրանսպորտային միջազգային ծրագրերի շրջանակներում համագործակցության զարգացման հնարավորությունները:

Երկու երկրների միջև միջազգային ավտոմոբիլային փոխադրումներն ակտիվացնելու և կանոնակարգելու նպատակով մշակվեց և քննարկվեց Համագործակցության Հուշագրի նախագիծ, որը հնարավորություն կտա իրականացնել տեղեկատվության փոխանակում՝ երկու երկրների միջև իրականացվող տրանսպորտային գործունեության, ինչպես նաև սահմանային անցակետերում յուրաքանչյուր կողմից գանձվող վճարների ու տուրքերի չափի վերաբերյալ:

Կողմերը պատրաստակամություն հայտնեցին ակտիվացնել համագործակցությունը միջազգային ուղևորափոխադրումների ոլորտում:

- **ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հայաստանի Հանրապետության և Իրաքի Հանրապետության միջև ապրանքաշրջանառությունը մեծացնելու և տարանցիկ փոխադրումները խթանելու նպատակով կողմերը համաձայնվեցին հնարավորինս սեղմ ժամկետներում ուսումնասիրել և վերացնել Հայաստանի, Իրանի և Իրաքի միջև տրանսպորտային փոխադրումների ոլորտում առկա խոչընդոտները: Այդ նպատակով պայմանավորվածություն ձեռք բերվեց 2019թ. հունիսի երրորդ տասնօրյակում ք. Երևանում կազմակերպել եռակողմ հանդիպում՝ հայկական, իրաքյան և իրանական համապատասխան մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Փոխադրումները դյուրացնելու և վարչարարությունը պարզեցնելու նպատակով, պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև քայլեր ձեռնարկել միջազգային փոխադրումներ իրականացնող վարորդներին երկարաժամկետ մուտքի արտոնագրեր տրամադրելու ուղությամբ:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

21.05.2019թ.